

ԶՈՒԱՐԹՆՈՅ ԿԱՄ ՀԱՆԳԸԺ ԵԿԵՂԵՑԻՆ.

(Նամակ խմբագրութեան)

Սկսած այն օրից, ինչ գրուում ու խօսուում է Զուարթնոց եկեղեցւոյ մասին՝ սիրտս ցաւում է ամեն անգամ, երբ անուանում են նորան «Խանգարած» եկեղեցի։ Այսօր, երբ կարդացի Յուսիկ սրբազանի մանրակրկիտ պատմական լուսաբանութիւնը (ի դէպ ասած միանգամայն և անկասկած ընդունելի), որի մէջ դարձեալ նոյն «Խանգարած» անուանը հանդիպեցի, ինձ բարոյական պարտաւորութիւն եմ համարում այդ կոչման մասին իմ գիտեցածն ասել։— Ինձ յայտնի չէ, թէ արդեօք պատմական գրականութեան մէջ մէկն ու մէկը անուանել է նորան «Խանգարած» եկեղեցի, թէ ոչ. ի՞նչ ոչ, ուրեմն այս անունը առնուել է, իբր թէ, ժողովրդի բերանից, ի հարկէ տեղական ժողովրդի։ Այն ինչ՝ ես ծնուած ու սնուած լիւնելով Վաղարշապատում, շատ և շատ անգամ առիթ եմ ունեցել այդ եկեղեցւոյ անունը կրկնելու ճիշտ ժողովրդական խօսքով։ Եւ ամեն անգամ, իւրաքանչիւր մի Վաղարշապատցու, մեծի, թէ փոքրի բերանից լսել եմ և ինքոհնչել ոչ «Խանգարած» և ոչ «Հանգարած» եկեղեցի, այլ «Հանգաձ» եկեղեցի, Վկայ եմ կոչում ամբողջ Վաղարշապատը՝ նոցա սակայն, որոնք դեռ չեն վարակուել նորագոյն անունով։ Դա բնական է,— այս երեք տարի է միշտ լսում են, խօսում են, կարդում են «Խանգարած», կարող են իրանք էլ նոյնը գործ դնել. բայց ինչո՞ւ աւանդաբար, հազար տարիներով Վաղարշապատի բնակիչների բերնում պահպանուած խօսքը խանգարել, այլակերպել։ «Հանգարած», այո, կընշանակէ քանգած, աւերուած, բայց ոչ պակաս բանաստեղծական է՝ «հանգաձ», որ կը նշանակէ իբրեւ ճրագ հանգած, իբրեւ կեանք— հանգած։ Սրբազան Յուսիկը ասում է, որ վաղ, շատ վաղ ժամանակներից

տեղական ժողովրդին յայտնի է միայն «Խանգարած կամ
Հանգարած» եկեղեցի անունը, անհասկանալի է, սակայն,
թէ ինչո՞ւ պէտք է հանգարած ասուի. իս տառը հ-ի չէր
կարող փոխուել. կարող էր հակառակը լինել—այո՛, բայց
«հանգարած» միտք չունի և Վտղարչապատու բարբառը,
իրբև զուտ արարատեան—հ չէ փոխում իս-ի:

Մնում է ինձ ուրախութեամբ ասել և այն, որ ըստ
վկայութեան նոյն Յուսիկ սրբադանի (Արարատ, 1902. ԺԱ.
—ԺԲ., էջ 1055) Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթուն-
նեանը նոյնպէս դեռ 1842 թ.ին կոչում է Զուարթնոց եկե-
ղեցին «հանգարած», և ոչ այլապէս:

Քժեղասլէս Բ. Նաւասարդեան

5 Մարտի 1902 թ.

Տփլիս.



ՄԵԾ ԵՂՋԻՐԱՒՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ.

Կիրք. Կթելու գործողութիւնը շատ նշանակութիւն ունի
կաթնատնտեսութեան մէջ, որովհետեւ կթելու եղանակից կա-
խումն ունի ստացուած կաթի քանակը, որակը և մաքրութիւ-
նը: Այս գէպըում ևս հարկաւոր է ձեռք առնել մաքրութեան
ըտլոր մեջոցները, իսկ կթել շրմացողը կվնասէ լաւ կաթնոտ
կալին:

Կովից հնար եղածին չափ մեծ քանակութեամբ մաքուր և
իւղոտ կաթ ստանալու համար պէտք է առաջնորդուել հետևեալ
կանոններով:

1) Ամէն անգամ կթելուց առաջ կովի ամբողջ ստինը,
մանաւանդ պտուկները, կովկեթը, կթողի ձեռները և կթելու
համար գործածուած ըտլոր ամանները պէտք է շատ մաքուր